

1905 թուի 1-ն Օգոստոսի Անուանական Բարձրագոյն Ուկազի հիման վրայ, Ներքին Գործոց Նախարարի եւ երկրագործութեան ու հողաշինարարութեան գլխաւոր Կառավարչի հետ ունեցած համաձայնութեամբ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Թիֆլիս, 4 նոյեմբերի 1905 թ. ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Փոխարքայ Կովկասում Գեներալ—ադիւտանտ (ստորագրել է) կոմս Վ. ՕՐՈՆՑՕՎ—ԴԱՇԿՈՎ:

ԿԱՆՈՆՆԵՐ

Թէ ինչ կարգով 1903 թուի Յունիսի 12-ի օրէնքով յարգունիս գրաւուած հայ-լուսաւորչական եկեղեցուն պատկանող կալուածներն ու դրամագլուխները պէտք է վերադարձնել սոյդ եկեղեցու պատշաճաւոր հաստատութիւնների տեսչութեան համաձայն 1905 թուի Օգոստոսի 1-ի Բարձրագոյն Ուկազի:

1) *Կովկասի փոխարքայութեան նահանգներում, երկրներում* (область) *և առանձին շրջաններում* (округъ) *յարգունիս գրաւած հայ լուսաւորչական եկեղեցու կալուածների և դրամագլուխների՝ հայ լուսաւորչական հոգևոր հաստատութիւնների տեսչութեան վերադարձնելու մօտաւոր կարգադրութիւնը, նոյնպէս և այդ յանձման մօտաւոր վերահսկողութիւնը՝ տրւում են նահանգապետներին, զինուորական նահանգապետներին, երկիրների ու*

առանձին շրջանների պետերին։ Նրանց տեսչութեանն են յանձնուում. Ա.) Ներքին գործերի նախարարութիւնից բոլոր այն գումարները, որոնք պատկանում են հայ լուսաւորչական եկեղեցուն և գտնուում են այդ նախարարութեան կարգադրութեան ներքոյ, որպիսիք են՝ ընդունած դրամագլուխներն իրանց բարդուած տոկոսներով, նախկին երկրագործական և պետական գոյքերի նախարարութեան կողմից ներքին գործերի նախարարութեանը յանձնած եկեղեցական, վանքապատկան անշարժ կալուածների արդիւնքները, այս արդիւնքներից՝ կալուածները կառավարելու և պահեստի դրամագլուխ կազմելու համար 10 տոկոս վերցրած գումարի մնացորդները, օժանդակ դրամագլուխ կազմելու համար 5 տոկոս ետ պահածներն և այլն. նոյնպէս և՝ դրամագլուխների հետ ընդունած դրամային և ուրիշ՝ այդ դրամներին վերաբերեալ վաւերագրերը. Բ.) Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի վարչութիւնից հանել—բոլոր արձանագրութիւնները, ցուցակները (опись), որոնք կազմուած են 1903 թուին, երբ եկեղեցական կալուածներն յարքունիս էին ընդունուում։

Ծանօթութիւն. Գումարները, վաւերագրերը, արձանագրութիւնները, ցուցակները և այլն. ուղղուում են այն նահանգապետներին, երկիրների ու առանձին շրջանների պետերին, որոնց կողմից են այդ բոլորը յանձնուել նախարարութեան և Փոխարքայի վարչութեան։

2) Այդ կալուածների ու դրամագլուխների վերադարձնելն արագացնելու և այդ գործի վերաբերեալ ծախքերը կրճատելու համար, դրամական գումարները, դրամային և այլ սրանց վերաբերեալ վաւերագրերն ու դրքերը նահանգապետների, երկիրների ու առանձին շրջանների գլխաւորների կողմից ուղարկուում են հայ եկեղեցու այն հաստատութիւններին, որոնցից ընդունուել են այդ կալուածները. դրանց էլ կցուում են—այն դէպքում, երբ վերադարձնուում են 1903 թուին պետական վարչութեան կողմից ընդունած գումարներից աւելի կամ պակաս գումարներ—այդ տարբերութիւնը բացատրող հաշիւները։

Այդ հաստատութիւնները՝ գրամ և գրամական վաւերագրեր ստանալու համար, պարտաւոր են տեղեկացնել նահանգապետներին, երկիրների ու առանձին շրջանների գլխաւորներին 7 օրուայ ընթացքում, ըստ որում, որևէ թիւրիմացութեան դէպքում, իրանց տեղեկագրերի հետ պիտի ներկայացնեն իրանց անբաւականութիւնը բացատրող յայտագիր։

3) Հայ լուսաւորչական եկեղեցու անշարժ կալուածների և գրամագլուխների անմիջական վերադարձնումը թողնւում է հէնց այդ գործի համար առանձնապէս նշանակուած յանձնող մասնաժողովներին, որոնք նշանակւում են ներքին գործերի նախարարութեան և երկրագործական ու հողային. գլխաւոր կառավարութեան տեղական վարչութեան հայեցողութեամբ։ Այդ երկու մարմինների կողմից նշանակուած ներկայացուցիչներն իրանց վարչութիւններից ստանում են համապատասխան ցուցմունքներ, վաւերագրեր, նոյնպէս և ձևական առաջարկներ։

Ծանօթութիւն. Երևանի նահանգապետը լիազօրութիւն է տալիս տեղական փոխ-նահանգապետին՝ ղեկավարելու՝ Էջմիածնի վանքի կալուածները վերադարձնելու համար նշանակուած մասնաժողովի գործողութիւնները։ Թիֆլիզում յանձնող մասնաժողովի գործողութիւնների ղեկավարութիւնը յանձնւում է Կովկասի գլխաւոր վարչութեան հայեցողութեամբ նշանակուած անձի։

4) Յանձնող մասնաժողովների գործողութիւնների ծրագիրն որոշւում է նահանգապետների, երկիրների ու առանձին շրջանների պետերի, երկրագործական և պետական գոյքերի կառավարութեան տեղական վարչութիւնների հետ կայացրած համաձայնութեամբ։

5) Հայ-լուսաւորչական եկեղեցական վարչութեան կողմից՝ անշարժ կալուածներն ընդունելու համար լիազօր կարող են լինել եկեղեցիների կալուածները ընդունելու համար՝—թեմի թեմական առաջնորդի հայեցողութեամբ նշանակուած անձինք, եկեղեցու աւագ քահանայի և երես-

փոխի մասնակցութեամբ։ Հոգևոր դպրանոցների (սեմինարիաների) կալուածներն ընդունելու համար—հոգաբարձական խորհրդի անդամները, վերջինների ընտրութեամբ և թուով էլ 3—4, թեմական դպրոցի տեսչի (ректоръ) մասնակցութեամբ. իսկ վանքապատկան կալուածների համար՝ վանահայրը և հոգևոր վարչութեան կողմից նշանակուած, վանքի միաբաններից 2—3-ը, եթէ կան, իսկ եթէ չկան, այլ՝ հոգևոր կամ աշխարհական անձնաւորութիւնների մասնակցութեամբ։

Ծանօթութիւն. Էջմիածնապատկան կալուածների ընդունելը ղեկավարելու համար Սրբազնագոյն Պատրիարք-Կաթողիկոսի կողմից լիազօրութիւն է ստանում առանձին անձն։

6) Գոյքերը յանձնելու ժամանակ յանձնող մասնաժողովներն իրանց ստանձնած գործին աջակցութիւն ցոյց տալու համար հրաւիրում են քաղաքներում—քաղաքային վարչութեանց ներկայացուցչին, իսկ շինական վայրերում—գիւղապետին (старшина) և տեղական բնակիչներից երկու բարեխիղճ անձնաւորութիւն։

7) Անշարժ գոյքերի յանձնման գործը դիւրացնելու համար դիմում է 1903 թուի գրաւման ժամանակ կազմած արձանագրութիւններին և ցուցակներին, որտեղ ստորագրում են մի կողմից յանձնող մասնաժողովի անդամները՝ թէ սոյն արձանագրութիւնների և ցուցակների մէջ ցոյց տուած գոյքերը յանձնւում են եկեղեցական վարչութիւններին, միւս կողմից ստորագրում են հոգևորականութեան ներկայացուցիչները նրանց ստացման համար և մնացեալ ներկայ եղող պաշտօնական մարդիկ ստորագրում են թէ՝ ներկայ էին գոյքերի յանձնելու ժամանակ։ Եւ այստեղ ինկատի են առնում և արձանագրութեան կցում այն էական փոփոխութիւնները, որոնք տեղի են ունեցել այդ կալուածների՝ պետութեան կողմից կառավարելու ժամանակամիջոցում։

8) Եթէ յանձնուող կալուածքը, կամ նրա մի մասը տրուած է կապալով ըստ պայմանագրի կամ ըստ տեղա-

կան սովորութեան, այն ժամանակ կապալառուները կամ օգտուողները ստանում են տեղեկութիւններ յանձնող մասնաժողովից, թէ այդ կալուածքները պետական վարչութիւնից անցնում են հայ լուսաւորչական եկեղեցուն ենթակայ հաստատութիւնների վարչութիւններին։

9) Կովկասի անշարժ գոյքերը հայ-լուսաւորչական եկեղեցու պատշաճաւոր վարչութիւններին յանձնելիս, երկրագործական և հողաշինար. գլխաւոր վարչութիւնն ուղարկում է Նորին Կայս. Մեծութեան Կովկասի փոխարքային այդ կալուածների՝ պետութեան կողմից կառավարելու ժամանակաշրջանում եղած ել և մտից մանրամասն հաշիւը։

Իր կողմից ներքին գործերի նախարարութիւնն այդ կալուածներից ստացած եկամուտների չծախսուած մասը յանձնում է Փոխարքայի տեսչութեանը։ Այս եկամուտներն անշարժ գոյքերի սեփականատէրերի մէջ բաժանելու համար Կովկասի Փոխարքան հիմնում է առանձին խորհուրդ՝ ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք-Կաթուղիկոսի ներկայացուցչի մասնակցութեամբ։

10) Եթէ յանձնուող անշարժ կալուածքում կան արդիւնաբերութեան գործիքներ կամ այլ շարժական գոյք (անասուն, հաց, և այլն), որոնք ձեռք են բերուած նոյն կալուածքից ստացուած եկամուտների հաշուին, և եթէ կան կալուածքից ստացուած բնական բերքեր, այն ժամանակ եղածը յանձնում է հոգևոր տեսչութեան ներկայացուցիչներին՝ ըստ ցուցակի, որի մի օրինակը կցում է արձանագրութեանը, իսկ միւսը տրւում՝ հոգևոր տեսչութեան ներկայացուցիչներին։

11) Եթէ կալուածները յանձնելու ժամանակ հոգևոր վարչութեան կողմից որևէ գժգոհութիւն է արտայայտւում և յանձնող մասնաժողովի և հոգևոր տեսչութեան ներկայացուցիչների մէջ համաձայնութիւն չի կայանում, այն ժամանակ այս առթիւ կազմւում է միևնոյն արձանագրութիւնից 2 օրինակ՝ յանձնելու գործին բոլոր մասնակցողների ստորագրութեամբ. այդ օրինակներից մէկը

յանձնող մասնաժողովը ներկայացնում է նահանգապետին, իսկ միւս օրինակը՝ հոգևոր վարչութեան ներկայացուցիչը ներկայացնում է թեմական առաջնորդին։ Եթէ այնուհետև գործը լուծում չստանայ՝ նահանգապետի և թեմական առաջնորդի մէջ եղած յարաբերութեամբ, այն ժամանակ՝ թեմական առաջնորդը, 1905 թուի օգոստոսի 1-ի Բարձրագոյն Ուկազի II բաժնի համաձայն, դիմում է առանձին գրութեամբ Փոխարքային տալ վերջնական վճիռ այդ գործին։

Թեմական առաջնորդը միաժամանակ նահանգապետին, երկրի կամ առանձին շրջանի պետին հաղորդում է իր գրութեան պատճէնը։

12) Կալուածները հետզհետէ յանձնելու հետ, աստիճանական կարգով, նահանգապետներին, երկիրների կամ առանձին շրջանների պետերին ներկայացնում են արձանագրութիւնները, ցուցակները, նոյնպէս և հոգևոր տեսչութեան դժգոհութեան առթիւ կազմած արձանագրութիւնները։ Նահանգապետը, երկրի կամ շրջանի պետերը ներկայացնում են տեղեկագիր ի գիտութիւն Փոխարքայի յանձնելու ընթացքի մասին և սրա հետ մէկտեղ, ներկայացնում են դժգոհութեան մասին կազմած արձանագրութիւնները, իսկ յանձնելու արձանագրութիւնները, ցուցակները և սրանց կից էլ՝ II կէտի կանոնների հիման վրայ՝ հայ-լուսաւորչական եկեղեցու հիմնարկութիւնների՝ դրամագլուխների և այլ վաւերաթղթեր ստանալու տեղեկագրերը պահում են իրանց վարչութեան մէջ։

13) Թեմական առաջնորդները՝ եթէ այս կանոնները ստանալուց յետոյ երկու ամսուայ ընթացքում հայ-լուսաւորչական եկ. տեսչութեան չյանձնուին նոյն եկեղեցուն պատկանած որ և է գոյք կամ դրամական գումար, համապատասխան յայտագրով դիմում՝ են տեղական նահանգապետին, երկրի կամ առանձին շրջանի պետին, իսկ եթէ եւ այնուհետև մի ամսուայ ընթացքում չի կատարուիլ յանձնելը, այն ժամանակ՝ այդ մասին դիմում են Փոխարքային համապատասխան յայտագրով։ Իսկ եթէ յի-

չեալ ժամանակամիջոցի ընթացքում (2 ամիս) հոգևոր իշխանութեան ներկայացուցիչները մերժում են սահմանել գոյքերը, այն ժամանակ նահանգապետը, երկրի կամ առանձին շրջանի պետը այդ առթիւ դիմում են թեմական առաջնորդին, իսկ դրանից յետոյ էլ մի ամսուայ ընթացքում եթէ չվերջացաւ յանձնելու գործը, այն ժամանակ այդ մասին դիմում են Փոխարքային։

14) Դրամական գումարների և վաւերագրերի՝ ներքին գործերի նախարարութիւնից նահանգապետներին, երկրի կամ առանձին շրջանի գլխաւորներին ուղարկելու կամ նրանց անուան փոխագրելու և վերջիններից հայ եկեղեցու պատշաճաւոր հաստատութիւններին ուղարկելու ծախսերը լինելու են հայ-լուսաւորչական եկեղեցու տեսչութեան հաշուին։ Գոյքերը յանձնելու ժամանակ եղած՝ ատիճանաւորների գնալ գալու ծախքերը լինելու են նոյն եկեղեցու կալուածների ընդհանուր եկամուտների հաշուից։

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի Դիւանապետ Ն. ՊԵՏԵՐՈՍՆ։

Ուղիղ է՝ թարգման Սինոդի Ռ. Մադաթեան